

57. Էս մէկ քեռին կըսի.— Կասըն «Դաւթը մէկ էրակ ծուռի», մինք չընք աւատայ մկայ բալլու.¹ էրայ. Դաւթայ խուտք մէկի, որ էսայ խա՛-խա. որ էսայ չէ՛-չէ. կանէք, որ Դաւթայ մօտէն զօռով չառնէնք, Դաւթ չտայ:

38. Եօթ ախպէր խուտքիւր կէնըն մէկ. էրկուս զԴաւթ կը բռնէ, խինըն վէրու օխչար տ'առնըն:

Դաւթ ըրչկայ զօռով կը տանին, էսայ.— Էդա ինչ տ'առնէք:

— Ի՞նչ տ'անի՞նք. դիւ չըս իտայ, զօռով աը խլինք, տանինք:

39. Էկան զվէրու օխչարը ջանգակ² վերցն, Դաւթն էլ բըռնին: Դաւթն էլ ձեռ զարկից, գքեռն վերուց, էգենց գառնից գեաըն, դնայ խուղը մէջ:

40. Զեօթն էլ մէկ մէկ վերուց, դանից գեաըն:

Էլ չըրչկայ կուշա ու բուլուր:

Վերայ վէրու օխչար, դրեց թիւու վերայ, եկաւ առն:

Մէրն էսայ.— Դաւթ, քիւ քեռիքն էլ տարըն.

— Զէ, էսայ, էդա ի, իս բերը:

Էսայ — Քիւ քեռիք խիտ քի չկուռան, ձէն չտուըն:

— Ապա մարէ՛, էսայ, միտը ունէն ծընէ փախցուցէն, իսն էլ ըռըլամ, իմ քեռիքն մէկ մէկ եան³ թալիմ, վէրու օխչար առամ, էկամ:

41. Մէրն ըլաւ գինայ Մէլըք մօտ էսայ.— Մէլըք, դիւ Դաւթըն չըր խաւնը, արբ՛, տես. Դաւթ ինչ վէրու օխչար ի բերեր: Մէլըք էլաւ էկաւ, աըսաւ մէ ջուջ վէրու օխչար:

Էսայ.— Դաւթ, դիւ էկար, ապա քեռիք գո՛ւր գինացըն:

42. — Մէլըք, էսայ Դաւթ, էկանք քեաղըր քեամակ, իմ քեռիք իմ մօտէն կը խլին վէրու օխչար, իս իմ քեռիք շիրտիմ դեն, վէրու օխչար առամ, էկամ. իմ քեռիք մնացըն էն տե ծըծղալով, իս էկամ:

43. Մէլըք սրտըն առաւ.— Մարէ՛, էսայ, քիւ ախպէր-քիւ սպանիւր ի:

Մէր չաւատայ, համա Մէլըք յելաւ, վազից գինայ:

Գինայ տոււ, քեռիք ինչպէս զարկի խուղը մէջ, շիւր մէջը գինացիւր ի խուղը մէջ, մնացիւր ի բերանքտիւր բաց, էնու առամքիւր սըւտակ կտան:

44. Մէլըք որ խատաւ, տոււ քեռիք չուրցած ի, յելաւ յընդիւց, զարձաւ էկաւ առն, էսայ.

— Մարէ՛, Աստուած քիւ տուն աւերայ, քիւ ախպէրքիւր սպանիւր ի: Մապար տուրց, գինացըն քեռիք բերըն. խուրըն:

1 Թուրք.— յայտնի:

2 Թուրք.— յէշ լեշ զիակ:

3 Թուրք.

կողմ: